ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1960 Общественные науки

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 40-ԱՄՅԱԿԻՆ

Լ. Պ. Ղարիբջանյան

ԷՋԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921—1930)

Հայ ժողովուրդը պատրաստվում է Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին լայնորեն նշելու իր բազմադարյան պատմության ամենախոշոր իրադարձության՝ Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 40-ամյակը։

Սովետական իշխանության տարիներին երբեմնի հետամնաց Հայաստանը ռուսական կայսրության խուլ ծայրամասերից մեկը՝ դարձել է ժամանակակից արդյունաբերության և առաջավոր գյուղատնտեսության երկիր, որի արտադրանքի բազմաթիվ տեսակները հայտնի են ոչ միայն Սովետական Միության մեջ, այլև նրա սահմաններից շատ ու շատ հեռու։

Այս տարիներին հայ ժողովուրդը աննախընթաց հաջողություններ է ձեռք բերել նաև գիտության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Ռեսպուբլիկայում կուլտուրական ռևոլյուցիան իրագործելու, ժողովրդական տնտեսության շատ ճյուղերի համար բարձրորակ կադրեր պատրաստելու գործում խոշոր ներդրում ունի Սովետական Հայաստանի առաջին բարձրագույն դպրոցը՝ Երևանի Պետական Համալսարանը։ Սակայն մինչև այժմ մենք հրապարակի վրա չունենք քիչ թե շատ հանգամանալից ուսումնասիրություն՝ Սովետական Հայաստանում բարձրագույն կրթության, հատկապես համալսարանական կրթության հիմնադրման և զարգացման մասին։ Այս հոդվածում մենք մեր առջև խնդիր ենք դրել արխիվային փաստաթղթերի, գրականության մեջ եղած առանձին տեղեկությունների, ժամանակի մամուլում հրապարակված մի շարք նյութերի հիման վրա ցույց տալ (որքան հնարավորություն է տալիս հոդվածը) այն խոշոր աշխատանքը, որ կատարվել է Սովետական իշխանության առաջին տասնամյակում՝ Հայաստանում համալսարանական կրթության հիմնադրման ու ծավալման և Երևանի Պետական համալսարանը ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար մասնագիտական կադրերի պատրաստման իսկական պարբնոց դարձնելու ուղղությամբ։

Համալսարանի առաջին տասնամյակի գործունեությունը ինչպես հարկն է չի ուսումնասիրվել և նրա աշխատանքը քիչ թե շատ ամփոփող որևէ աշխատություն կամ հոդված չի տպագրվել։ Հրապարակի վրա կա միայն համալսարանի նախկին ռեկտոր, քիմիկոս-բակտերիոլոգ պրոֆ. Հ. Գ. Հովհաննիսյանի «ՀՍԽՀ պետական համալսարանը» հոդվածը, որտեղ հետաքրքիր տեղեկություններ կան համալսարանի գործունեության առաջին հինգ տարիների վերաբերյալ, որը տպագրվել է 1927 թվականին համալսարանի «Գիտական տեղեկագրի» № 2—3-ում[1]։ Մեր հոդվածը այդ բացը մասամբ լրացնելու մի համեստ փորձ է։

[1] Համալսարանի հետագա տարիների աշխատանքի մասին, նրա հիմնադրման 20-րդ տարեդարձի առթիվ 1941 թ. հրատարակվել է համալսարանի նախկին ռեկտոր Գ. Ի. Պետ-

* * *

Հայկական համալսարան ստեղծելու հարցը, սկսած XIX դարի երկրորդ կեսից, միշտ էլ հետաքրքրել է հայ առաջավոր ինտելիգենցիային։ Միքայել Նալբանդյանը օրինակ, ճիշտ է հիմնականում դնում էր լայն ժողովրդական կրթության հարցը, նրանում մասնագիտացման տարր մտցնելով, սակայն նրա մոտ որոշակի ակնարկներ կան նաև հայրենի համալսարան կամ ակադեմիա ստեղծելու անհրաժեշտության մասին։

Դեռևս իր ուսանողական տարիներին գրած «Լսարան» բանաստեղծության մեջ, որը նվիրված է Մոսկվայի համալսարանին Մ. Նալբանդյանը համալսարանը համարում է այն «ընտիր տեղը, ուր արմատ կարձակե գիտության ծառը»[2]։

«Մեր ազգին,— գրում է Նալբանդյանը,— ուսման և լուսավորության հետքից (այսինքն հանրակրթական դպրոցից հետո — Լ. Զ.) հարկավոր է տալ և կանոնավոր տնտեսական, գյուղական և վաճառականական դիտություն, որպեսզի հաստատ հիմքերի վերա կանգնի նորա թե երկրագործությունը և թե վաճառականությունը»[3]։ XIX դարի 60—70-ական թվականներին հայ երիտասարդության համալսարանական կրթության հարցը քննարկման առարկա է դառնում հայկական մամուլում։ Նախահեղափոխիոն շրջանում, հատկապես 1910—1916 թթ. հայկական Ակադեմիա կամ հայոց համալսարան հիմնադրելու անհրաժեշտությունը բազմիցս դրել ու հիմնավորել են հայ հասարակական-քաղաքական մտքի և կուլտուրայի մի շարք ականավոր ներկայացուցիչներ։ Հովհաննես Թումանյանը նշում էր, որ անհրաժեշտ է ստեղծել հայկական համալսարան՝ որպես երիտասարդությանը մայրենի լեզվով բարձրագույն կրթություն տալու և հայ գիտնականներին համախմբելու օջախ[4]։

«Մենք համարձակ կերպով կարող ենք ասել, որ մեր երկրին (Անդրկովկասին—Լ. Զ.) ամենից առաջ հարկավոր է համալսարան»[5],—1910 թ. գրում էր ականավոր ռեժիսյորներ Սուրեն Սպանդարյանը։ Հայ ժողովրդի, նրա լավագույն դավակների բոլոր երազանքները, այդ թվում նաև երիտասարդությանը մայրենի լեզվով բարձրագույն կրթություն տալու համար ուսումնական օջախներ բացելու երկարամյա իղձերը հնարավոր եղավ իրականացնել միայն սովետական կարգերում։

1920 թվականի դեկտեմբերին, երբ չէր հասցվել նույնիսկ սպանի դնել հայ ժողովրդի բազմաթիվ վերքերին, Հայաստանի Սովետական կա-

---

բոսյանի, «Երևանի պետական համալսարանը» վերնագրով բրոշյուրը, որտեղ շատ կարևոր տվյալներ կան համալսարանի մասին, սակայն նյութի մեծությունը և բրոշյուրի փոքր ծավալը (37 էջ) հնարավորություն չեն տվել հեղինակին կանգ առնել համալսարանի առաջին տասնամյակում կատարած աշխատանքների վրա։ Համալսարանի 25-ամյակի առնչությամբ «Սովետական Հայաստան» ամսագրում «Պանծալի հորելյանը» վերնագրով հոդված է գրել նաև համալսարանի նախկին ռեկտոր Հ. Խ. Բունիաթյանը, որը նույնպես համալսարանի առաջին շրջանի գործունեության վրա կանգ չի առել։

[2] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1-ին, Երևան, 1945, էջ 60։

[3] Նույն տեղում, էջ 461։

[4] Տես «Թումանյանը քննադատ», Երևան, 1939, էջ 418—419։

[5] Ս. Սպանդարյան, «Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր», Երևան, 1939, էջ 191։

ությունը հիմնադրեց Երևանի ժողովրդական համալսարանը, Սովետական Հայաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը»։

Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրումը բացառիկ կարևոր երևույթ էր հայ ժողովրդի կյանքում։ Այն ժողովրդի և նրա լուսավորության նկատմամբ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության ցուցաբերած մեծագույն հոգատարության առաջին արտահայտություններից մեկն էր։

Ծանր ու դժվարին ժամանակ հիմնադրվեց Հայկական սովետական համալսարանը։ Իրավացի էր պրոֆ. Ստ. Ղամբարյանը, որը համալսարանի անպարտիական պրոֆեսորների անունից Հայաստանի խորհուրդների 4-րդ համագումարում ունեցած իր ելույթում ասաց. «Հայաստանի համալսարանը հիմնվեց այն ժամանակ, երբ դրա համար միջոցներ չկային, դուք վերջին կոպեկները տվեցիք համալսարանին, երբ ամեն մի կոպեկը թանկ էր... Հայոց պատմությունը դա երբեք չի կարող մոռանալ»[7]։

Այդ ջերմ հոգատարության համար, նույն համագումարում ուսանողության անունից շնորհակալության խոսք է ասում համալսարանի ուսանող Գ. Մուշեղյանը[8] (այժմ Բժշկական ինստիտուտի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ)։

Հայաստանի տնտեսական վիճակն այնքան ծանր էր, որ այդ պայմաններում համալսարան ստեղծելը շատերը շռայլություն էին համարում։ Այդ մարդկանց պատասխանեց Ալ. Մյասնիկյանը Հայաստանի Խորհուրդների 1-ին համագումարում տված իր զեկուցման մեջ, հայտարարելով թե «Պոլսի «ժողովրդի ձայն»-ը ասում է. Անհասկանալի են Հայաստանի կառավարության շռայլությունները... երբ երկիրը քաղցած է։ Իբր թե մենք սնանկ լինելով լուսավորության վրա միլիարդներ ենք ծախսում»[9]։

Հայկական համալսարանի հիմնադրումը մեծ ոգևորությամբ ընդունվեց թե երկրի ներսում և թե նրա սահմաններից դուրս։ Փարիզի հայ համալսարանական միության վարչությունը գրում է.

«Անբացատրելի հաճույքով մըն է, որ կգրենք ձեզի մեր այս անդրանիկ նամակը։ Դուք անհնարին պայմաններու մեջ, հազար ու մեկ դժվարություններու դեմ պայքարելով, Հայաստանի սրտին մեջ իսկ ստեղծեցիք հայկական մշակույթի բարձրագույն վառարանը, Արարատի հովանիին տակ վերականգնելով մեր բազմադարյան քաղաքակրթությունը։ Փարիզի հայ համալսարանական միությունս... իր սրտագին ողջույնները կուղարկե Հայաստանի համալսարանին, անոր պրոֆեսորներուն և ուսանողներուն»[10]։

Համալսարանի բացման հանդեսը տեղի ունեցավ 1921 թվականի հունվարի 23-ին, կիրակի օրը, Ստ. Շահումյանի անվան բանվորական տան դահլիճում (այժմյան Երաժշտական կոմեդիայի թատրոնի շենքում)։ Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրման հանդիսավոր նիստում բացման ճառով հանդես եկավ համալսարանի առաջին ռեկտոր, ականավոր պատմաբան Հա-

[6] Տես «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ. 1, էջմիածին. 1921, էջ 17—18 և 34—35։

[7] «ՀՍՍՀ Խորհուրդների 4-րդ համագումար», Երևան. 1926, էջ 192։

[8] Նույն տեղում, էջ 194։

[9] ՀՍՍՀ Բ. Գ. և Կարմիր բանակայինների խորհուրդների առաջին համագումար, Երևան, 1922, էջ 20։

[10] «Նոր ուսանող» (Համալսարանի ուսանողական խորհրդի օրգան). Երևան, 1924, էջ 66։

կոր Մանանդյանը [11] (1873—1952)։ Ժողովրդական համալսարանի դերին ու խնդիրներին նվիրված ճառով հանդես է գալիս ՀՍՍՌ առաջին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանը. Հ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեի կողմից համալսարանի բացումը ողջունում է Վահան Երեմյանը, արհեստակցական միությունների լյուրոյի կողմից՝ Հայկ Ադաոյանը, Կարմիր Բանակի քաղաքական բաժնի կողմից՝ Լալայանը։

Շնորհակալություն հայտնելով այդ ողջույնների առթիվ, ռեկտոր Հակոբ Մանանդյանը նշում է, որ Հայկական բարձրավանդակը զուրկ է եղել բարձր ուսումնավայրերից. հայ մտավորականությունը զործել ու աշխատել է երկրի սահմաններից դուրս, որ այժմ նա պետք է վերադառնա Հայաստան՝ տառապած աշխատավորության դիտական պետքերին ծառայելու։ «Ժողովրդական Համալսարանի ուսումնական կոլեգիան,— ասում է նա,— լայն բացում է այս կրթարանի դռները դիտության ձգտողների առջև և հույս ունի, որ ուսանողության հետ միասին, ընդհանուր ջանքերով, կկարողանա շինել ու շենացնել Հայաստանի այս բարձր ու միակ ուսումնավայրը»[12]։ Հենց հանդիսավոր բացման օրն էլ տեղի է ունենում առաջին պարապմունքը։ «Խորհրդային իրավունքը և Հայաստանի ժողովրդական համալսարանը» թեմայով դասախոսություն է կարդում սոցիալական դիտությունների ֆակուլտետի դասախոս Գրիգոր Ջուրարյանը (այժմ համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դոցենտ)։ Համալսարանը տեղավորվում է նախկին ուսուցչական սեմինարիայի երկհարկանի սև տուֆաշեն շենքում[13]։ Նորմալ պարապմունքներն սկսվում են 1921 թվականի հունվարի 25-ին։

Այսպիսով, Երևանի համալսարանը Հայաստանում Սովետական իշխանության հաստատման արդյունք է, սովետական կարգերի ծնունդ։ Ավելորդ չէ նշել, որ դաշնակները Հայաստանում իրենց տխրահռչակ իշխանության վերջին տարում համալսարան հիմնելու մի անհաջող փորձ արեցին։ 1920 թվականի հունվարի 31-ին նրանք մեծ աղմուկով Ալեքսանդրապոլում կատարեցին իրենց «համալսարանի» բացման արարողությունը՝ դաշնակցական կառավարության անդամների և օտարերկրյա դեսպանությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Ժամանակի թերթերը՝ հատկապես դաշնակցության կենտրոնական օրգան «Հառաջը» այդ մասին քիչ չեն գրել։ Սովետական մամուլը տարբեր առիթներով մերկացրել է դաշնակների՝ այդ մեծ աղմուկով բացված, բայց իրականում դիտա-մանկավարժական ոչ մի գործունեություն չունեցող ու արժեք չներկայացնող «համալսարանը» Երևանի Պետական համալսարանի նախորդը համարելու բոլոր փորձերը։ Դաշնակների «համալսարան» հիմնելու այդ ձախողված փորձի մասին խոսել է ՀՍՍՌ Լուսավորության ժողկոմ Ասքանազ Մռավյանը, Լուսժողկոմատի 5 տարվա գործունեության վերաբերյալ հաշվե-

---

[11] Հ. Մանանդյանին համալսարանի դիտական խորհուրդը ռեկտոր է ընտրել 1921 թ. հունվարի սկզբին։ Համալսարանի բացմանը արտասանած նրա ճառը չի պահպանվել։ «Կոմունիստ» (հայերեն) թերթի 1921 թ. հունվարի 26-ի համարում՝ համալսարանի բացման հանդիսավոր նիստի մասին հաղորդման մեջ փոքրիկ մեջբերում կա Հ. Մանանդյանի եղրափակման խոսքից։

[12] Տես «Կոմունիստ» (հայերեն) 1921, 26 հունվարի, № 39։

[13] Համալսարանի հին շենքը (Արովյան 104) կառուցվել է 1903—1912 թթ. ուսուցչական սեմինարիայի համար։ Ճարտ. Ն. Բունիաթյանի նախագծով կառուցվել է նրա 3-րդ հարկը (1935 թ.) և աջ թևը, որտեղ այժմ տեղավորված է մեծ դահլիճը (1939 թ.)։

տվության մեջ, որը տպագրվել է 1925 թվականին և վերահրատարակվել 1958 թ. ՀՍՍՌ Գիտ. ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտի կողմից, մտնելով «Восстановление народного хозяйства Армянской ССР» փաստաթղթերի ժողովածուի մեջ։

Այդ զեկուցման մեջ Ա. Մռավյանը ցույց է տալիս, թե իրենից ինչ էր ներկայացնում դաշնակների հիմնած «համալսարանը»։ «Դասախոսների թիվը սոսկ $2^1/_2$ դույզ էր, որոնց մեջ մի դույզ եպիսկոպոս և մի նախկին վանական,— ասում է Ա. Մռավյանը,— ... համալսարանը քոչում է Երևան, մտածելով, որ այստեղ իր գոյության համար ավելի բարենպաստ հող կգտնի, սակայն, ինչպես պարզվեց, հողը բարենպաստ էր միայն դասախոսների համար։ Նրանք պետական գրամոլ ձևեր են բերում գումակ, որով շրջագայում էին գյուղերը և ձմռան համար մթերքներ գնում, իսկ ուսանողությունը սովում էր, նրան միայն հաշվառման էին ենթարկում և ցուցակներում գրանցում»[14]։ Պետական համալսարանի պարտիական Կոմիտեի և Արհկոմի օրգան «Հարվածային ուսանող» թերթը 1935 թ. № 34-ում տպագրելով Վ. Պարսամյանի «Դաշնակցական համալսարանը» խորագրով հոդվածը, նշում էր, որ «դա ավելի շուտ մի խրտվիլակ էր, քան համալսարան»[15]։

Ակնհայտ է դաշնակների այն պնդման անհեթեթությունը, թե իբր մենք անտեսում ենք հիշյալ իրողությունը[16]։ Բայց մի բան է համալսարան ստեղծելու մասին թմբկահարելը և այլ բան է իրականում այն ստեղծելը։ Փաստերը անառարկելիորեն վկայում են այն մասին, որ դաշնակների ստեղծած «համալսարանը» ըստ էության չի գործել։ «Համալսարանը» գտնվել է Ալեքսանդրոպոլում, իսկ նրա ղեկավարներն ապրել են Թիֆլիսում։ «Համալսարանը» չի հրատարակել ոչ մի գիրք կամ ձեռնարկ, չի կատարել ուսումնական կամ գիտական որևէ գործ։ Իզուր չէ, որ արտասահմանյան որոշ թերթեր այդ «համալսարանը» բնութագրում են որպես շատ արագ մոռացված, «չծաղկած ու արդեն չորացած վարժարան»[17]։

Սովետական հայկական նորաստեղծ համալսարանը իր համար հավաքագրեց դասախոսական նոր կազմ, նոր ուսանողություն, իր առաջ դրեց բոլորովին այլ նպատակներ ու խնդիրներ։ Նա սկսեց ծառայել երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործին, նոր սոցիալիստական մասնագետներ պատրաստելու գործին և չէր կարող լինել ժառանգը այդ խղճուկ «մոնթարանի», որին դաշնակները սնապարծությամբ «համալսարան» էին կոչել։

1920 թվականի դեկտեմբերի 28-ին Լուսժողկոմատը հաստատեց Երևանի ժողովրդական համալսարանի ժամանակավոր կանոնադրությունը[18]։

Կանոնադրության «Համալսարանի նպատակն ու անելիքը» բաժնի առաջին հոդվածում շեշտվում էր, որ «Երևանի ժողովրդական համալսարանը բան-

---

[14] ՀՍՍՌ պետական արխիվ, ֆ. 40/113, ց. 3, գ. 331, թթ. 59—73, կամ «Восстановление народного хозяйства Армянской ССР» (Материалы и документы за 1921—1928 гг.), Изд. АН АрмССР, Ереван, 1958, стр. 479.

[15] Տես «Հարվածային ուսանող», 1935, 29 նոյեմբերի, № 34։

[16] Այդպես է գրում առանձնապես Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագիրը։

[17] «Պայքար նոր տարւոյ բացառիկ», Բոստոն, 1953, էջ 170։

[18] Տես «Դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1-ին, Էջմիածին, 1921, էջ 35—39։

վորա-գյուղացիական ազատ դպրոց է, որը մասսաների սեփականություն է դարձնում բնական ու սոցիալական գիտություններն ու նրանց ուսումնասիրության մեթոդները, նպաստելով կյանքի գիտակցական վերաշինությանը, կոմունիստական աշխարհայացքի հիմունքներով»[19]։

Համալսարանի անդրանիկ կանոնադրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն մշակելիս լուրջ կերպով հաշվի է առնվել Սովետական Ռուսաստանի փորձը, պարտիայի կողմից 1917—20 թվականների ընթացքում Ռուսաստանի բարձրագույն դպրոցների գործունեությունը վերակառուցելու և բարելավելու ուղղությամբ ձեռնարկած միջոցառումները, Վ. Ի. Լենինի ցուցումները։

Ինչպես հայտնի է, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո բարձրագույն դպրոցի վերակառուցման առաջնահերթ խնդիրն այն էր, որպեսզի բուհերի դռները լայնորեն բացվեին բանվորա-գյուղացիական երիտասարդության առաջ, և դասախոսական աշխատանքի ներգրավվեին Սովետական իշխանությանը աջնվորեն ծառայելու պատրաստակամություն ունեցող դասախոսներ։ Դրանք լուրջ խնդիրներ էին։ Բուրժուական ինտելիգենցիայի ոչ մի խումբ այնպիսի համառ և երկարատև դիմադրություն ցույց չի տվել Սովետական իշխանությանը և նրա միջոցառումներին, ինչպես բուրժուական պրոֆեսուրան։ Բոլոր այն միջոցառումները, որոնք Սովետական կառավարության օրգանները անց էին կացնում բարձրագույն դպրոցների վերակառուցման ուղղությամբ, հանդիպում էին բուրժուական պրոֆեսուրայի մեծամասնության սվիններին։ Բուհերում ուսանողության կազմը պրոլետարացնելու համար՝ Վ. Ի. Լենինը 1918 թ. օգոստոսի 2-ին, հակառակ ռեակցիոն պրոֆեսուրայի դիմադրությանը, դեկրետ ստորագրեց բուհերի ընդունելության կարգի մասին։ Այդ նույն օրը Ժողկոմխորհը ընդունել էր Վ. Ի. Լենինի գրած որոշումը՝ «ՌՍՖՍՌ բուհերը ընդունվելու կանոնների մասին»[20]։ Այդ երկու փաստաթղթերի հիման վրա հիմնովին փոխվեց ընդունելության կարգը Ռուսաստանի բուհերում։

Վ. Ի. Լենինը Լուսժողկոմատից պահանջում էր, որ ընդունելության ժամանակ խստորեն պահպանվի դասակարգային սկզբունքը։ «Ունևոր դասակարգերի համար ոչ միայն իրավաբանական, այլև փաստական ոչ մի արտոնություն չպիտի,— ասում էր Լենինը,— առաջին տեղը անպայման պետք է ընդունվեն պրոլետարիատի և շրջավորագույն գյուղացիության միջավայրից ելած անձինք, որոնց լայն չափով թոշակներ կտրամադրվեն»[21]։

ՍՄԿՊ 8-րդ համագումարի կողմից ընդունած պարտիայի ծրագրի մեջ ասվում էր. «...9. Բոլոր սովորել ցանկացողների և առաջին հերթին բանվորների համար լայնորեն մատչելի դարձնել բարձրագույն դպրոցի լսարանները. բարձրագույն դպրոցում պասսիվական գործունեության ներգրավել բոլոր նրանց, ովքեր կարող են այնտեղ սովորեցնել. վերացնել թարմ գիտական ուժերի և ամբիոնի միջև եղած բոլոր և ամեն տեսակի արհեստական արգելքները, նյութապես ապահովել սովորողներին՝ պրոլետարներին ու գյուղացիներին բարձրագույն դպրոցից օգտվելու փաստական հնարավորություն տալու նպատակով»[22]։

---

[19] Նույն տեղում, էջ 35։

[20] СУ (Собрание узаконений и распоряжений рабочего и крестьянского правительства). 1918, № 57, ст. 632.

[21] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 28, էջ 42։

[22] «ՍՄԿՊ-ն բանաձևերում», 1-ին մաս, Երևան, 1954, էջ 531—532։

Նկատի ունենալով, որ ունևորների երեխաները մինչև ռևոլյուցիան սիստեմատիկ կրթության հնարավորություններ էին ունեցել և քննությունների ժամանակ նրանք կարող էին առավելություն ունենալ գնահատականներով, վերացվեցին ընդունելության քննությունները։ 16 տարին լրացած բոլոր քաղաքացիները իրավունք ստացան առանց քննության, նույնիսկ առանց միջնակարգ դպրոցի ավարտականի, ընդունվել Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները։

Վերացվեցին կանանց համար բուհեր ընդունվելու բոլոր արգելքները։ Այդ դեկրետը վերացրեց նաև ուսման վարձը։

Բուհերի դեմոկրատացման համար խոշոր դեր խաղաց ժողկոմխորհի 1921 թ. սեպտեմբերի 2-ի դեկրետով ընդունված «Բարձրագույն դպրոցի կանոնադրությունը», որի համաձայն վերացվեցին ամբիոնները և դրանց ֆունկցիաները տրվեցին առարկայական հանձնաժողովներին։

Երևանի ժողովրդական համալսարանը, հաշվի առնելով ՌՍՖՍՌ-ում բարձրագույն կրթության կազմակերպման այս փորձը, աշխատավոր երիտասարդությանը համալսարան ընդունելու համար լայն հնարավորություններ ստեղծեց։ Համալսարանի 1920 թվականի դեկտեմբերի 28-ի ժամանակավոր կանոնադրության 10-րդ կետում նշված է, որ համալսարան ընդունվում են 16 տարին լրացած անձինք՝ առանց քննության և «առաջին հերթին ընդունվում են բանվորներն ու չքավոր գյուղացիները և ապա մյուս քաղաքացիները»[23]։

Առանց քննությունների համալսարան ընդունելը, ընդունվողների համար լրիվ միջնակարգ կրթության ոչ պարտադիր լինելը և այն հանգամանքը, որ դասերը համալսարանում սկսվում էին երեկոյան ժամերին (ժամը 4-ից մինչև երեկոյան 10-ը), աշխատավոր երիտասարդությանը համալսարանական կրթություն ստանալու համար բարենպաստ պայմաններ էին ստեղծում։

1921—22 ուսումնական տարում համալսարանի ուսանողության 50%-ը 20—25 տարեկան էր, իսկ 25,5%-ը՝ 25-ից բարձր տարիքի[24]։

Բանվոր և գյուղացի երիտասարդությանը բարձրագույն դպրոց ընդունվելու արտոնություններ սահմանելը բավական չէր։ Անհրաժեշտ էր ուսանողության համար ստեղծել նաև սովորելու նյութական պայմաններ ու հնարավորություններ, որպեսզի նրանք կարողանային իրենց ամբողջովին նվիրել ուսմանը։ Վ. Ի. Լենինը պրոլետարական ուսանողությանը նյութապես ապահովելու հիմնական ձևը համարում էր պետության կողմից տրվելիք թոշակը։

Չնայած երկրում գոյություն ունեցող սուղ պայմաններին, Հայաստանի կառավարությունը 1922 թվականի փետրվարի 8-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ դեկրետ է հրատարակում Երևանի համալսարանի ուսանողներին ժողկոմխորհի հատուկ ֆոնդից 50 թոշակ հաստատելու մասին։ Ըստ այդ դեկրետի՝ համալսարանի ուսանողը, բացի սովետական աշխատողների համար սահմանված մթերարաժնից, ստանում էր նաև 15 ռուբլի (ոսկով)[25]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1923 թ. ապրիլի 3-ի «Բուհերի ուսանողների նյութական ապահովման մասին» որոշմամբ ուսանողներին տրվում են նաև մի շարք արտոնություններ՝ կոմունալ ծախսերը զիջվում են 50 տոկոսով, թատրոնների ու

[23] «Դեկրետների և հրամանների ժողովածու», 1-ին պրակ, էջմիածին, 1921, էջ 36։

[24] Պետական համալսարանի արխիվ, գործ № 11, թ. 5։

[25] «Խորհրդային Հայաստան», 1922, 19 փետրվարի, № 41 կամ «Դեկրետների և որոշումների հավաքածու», 1922, Երևան, էջ 17—18։

կինոների տոմսավճարը՝ 50%-ով, Պետհրատի հրատարակությունները ուսանողներին տրվում են 40% զեղչով[26] և այլն։

Վերը նշված հանգամանքները ցույց են տալիս, որ Երևանի նորաբաց ժողովրդական համալսարանը ամեն ջանք գործ էր դնում կենսագործելու բուհերը պրոլետարացնելու, աշխատավորական երիտասարդության ուսման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու վերաբերյալ պարտիայի դիրեկտիվները։ Դրա շնորհիվ արագորեն աճում է համալսարանի ուսանողության թիվը, բարելավվում նրա սոցիալական կազմը։ Եթե 1921/22 ուս. տարում համալսարանն ուներ ընդամենը 255 ուսանող, ապա հաջորդ ուսումնական տարում այդ թիվը հասնում է 463-ի, մի տարի հետո՝ 938-ի, 1925/26 ուսումնական տարում 1161-ի, իսկ 1929/1930 ուս. տարում արդեն 1316-ի[27]։ Առաջին ուսումնական տարում ուսանողության մեջ բանվորներ և գյուղացիներ համարյա չկային՝ 120 հոգի ծառայողներ էին, 79-ը արհեստավորներ, մինչդեռ 1922/23 ուսումնական տարում արդեն 463 ուսանողներից բանվորներ էին 20-ը, գյուղացիներ 201-ը[28], իսկ 1929/30 ուսումնական տարում 175-ը բանվորներ ու բանվորների երեխաներ էին[29]։

Համալսարանը իր բացման ժամանակ ուներ երկու ֆակուլտետ՝ հասարակագիտական (սոցիոլոգիական) և բնագիտական։ Սրանք այն ֆակուլտետներն էին, որոնց բազայի վրա հետագայում կազմակերպվեցին համալսարանի մյուս ֆակուլտետները։

Համալսարանի կառուցվածքը շատ անգամ է փոփոխությունների ենթարկվել, ըստ որում հաշվի է առվել, թե ժողովրդական տնտեսության, տեխնիկայի, գիտության, կուլտուրայի զարգացումը տվյալ էտապում ինչպիսի մասնագետների կարիք ունի, ինչպիսի պահանջ է ներկայացնում համալսարանին։

1921 թ. փետրվարի կեսերից, Հայաստանում սկսված քաղաքացիական կռիվների, դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի կապակցությամբ, համալսարանը ժամանակավորապես փակվում է։ Չնայած ապրիլի 2-ին դաշնակները դուրս են շպրտվում Երևանից, բայց մինչև հոկտեմբեր ամիսը համալսարանը հնարավորություն չի ունենում նորմալ կերպով վերսկսելու իր աշխատանքները։

1921 թ. հոկտեմբերին ժողկոմխորհի որոշմամբ վերաբացվում է համալսարանը։

Սոցիալիստական շինարարությունը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության վերականգնման, ժողովրդական կրթության գործի արմատական բարելավման հարցերը նոր խնդիրներ էին դնում Հայաստանի միակ բարձրագույն դպրոցի՝ համալսարանի առաջ։

«Համալսարանը,— գրում է Ակ. Մյասնիկյանը,— այն հնոցն է ու լաբորատորիան, որից կենսատու ճառագայթներ են ցրվում դեպի ծայրերը։ Գիրն ու ընթերցանությունը տարածելու համար պետք են լուսավոր գլուխներ, որ կտա համալսարանը։ Հողի մշակությունը պահանջում է դաշտագետներ, որոնց ստեղծելու է դարձյալ համալսարանը։ Արդյունագործությունն ու արհեստը չեն կարող բարգավաճել առանց ճարտարապետի, որին նույնպես պատրաստելու է

[26] Տես ՄԱԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 116/2, գործ № 1, թ. 14։
[27] Պետակտն համալսարանի արխիվ, գործ № 11, 13, 23, 33։
[28] «Խորհրդային Հայաստան». 1924, 23 մարտի, № 68։
[29] Համալսարանի արխիվ, գործ № 33, թ. 9։

համալսարանը։ Ընդհանուր կուլտուրայի զարկերակը բանելու է շարունակ ու անընդհատ, եթե առողջ պահվի սիրտը։ Համալսարանը այդ սիրտն է»[30]։

1921 թ. հոկտեմբերին համալսարանը վերաբացվում է արդեն ոչ թե երկու, այլ 5 ֆակուլտետներով՝ բնագիտական, որը շուտով վեր է ածվում գյուղատնտեսական ֆակուլտետի. նրա դեկանն է նշանակվում հայ առաջին ագրոբիմիկոս-միկրոբիոլոգներից մեկը՝ Պապա Բեջանի Քալանթարյանը (1887—1942), տեխնիկական ֆակուլտետ (սկզբում դեկան էր Դավիթ Զավրյանը, ապա ինժեներ Գրիգոր Շիրմազանյանը), արևելագիտական, որը շուտով վեր է ածվում պատմագրական ֆակուլտետի, դեկավարում էր ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը, ապա նշանավոր գրականագետ-լեզվաբան Մանուկ Աբեղյանը (1865—1944), խորհրդային շինարարության՝ դեկան էր Գևորգ Ղարաջյանը(Արկոմեդ-1861—1936), ապա գրականագետ Յոլակ Խանդաղյանը (1886—1935), մանկավարժական՝ դեկանն էր մանկավարժ-հոգեբան Գուրգեն Մեսրոպի Էդիլյանը (1885—1942)։

1922 թվականի մարտի 15-ից բժշկական դպրոցը միացվում է համալսարանին և բացվում է նաև բժշկական ֆակուլտետ, որի դեկան է նշանակվում բժիշկ Սպանդարատ Կամսարականը։ 1923 թվականի հունվարին ստեղծվում է համալսարանի բանվորական ֆակուլտետը, որի դեկան է նշանակվում Հայկ Ազատյանը (այժմ Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ), տեղակալ բանասեր-տնտեսագետ Թադևոս Ավդալբեգյանը (1885—1942)։ Բանֆակը մեծ դեր խաղաց համալսարանը պրոլետարացնելու և նրա ուսանողության սոցիալական կազմը բարելավելու տեսակետից։

Համալսարանի համար խոշոր նշանակություն է ունենում Հայկական ԽՍՀ ժողկոմխորհի 1923 թ. հոկտեմբերի 20-ի որոշումը՝ Երևանի ժողովրդական համալսարանը «Պետական համալսարան» վերանվանելու մասին[31]։ Դա, անշուշտ, սոսկ անվանափոխություն չէր։ Այդ որոշումը նպատակ ուներ համալսարանը դասել միության մյուս համալսարանների շարքը, բարձրացնել նրա տեսակարար կշիռը մեր կյանքում, ավելի ճշգրտորեն որոշել նրա խնդիրներն ու պարտականությունները։ Որպեսզի ավելի պարզ լինեն համալսարանի կառուցվածքի և նրա ֆակուլտետների փոփոխություններն ու անվանափոխությունները 1920-ից 1930 թվականների ընթացքում, կազմել ենք 27 էջում զետեղված սխեման։

* * *

Հայաստանում համալսարանական կրթության հիմնադրման, ընդլայնման և զարգացման գործում խոշոր ավանդ է մուծել հայ մտավորականության այն մասը, որը երկրում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից կանգնեց նրա կողմը և իր ուժերը նվիրաբերեց հարազատ ժողովրդի կրթության գործին։

Համալսարանի հիմնադրման ժամանակ և նրա գործունեության առաջին շրջանում ամենալուրջ դժվարությունը համապատասխան դասախոսական կադրերով ապահովելն էր։

1920 թ. դեկտեմբերի 28-ին Լուսժողկոմատը հաստատեց համալսարանի հաստիքները և դասախոսական կազմը։ Համալսարանին տրվեց 20 պրոֆեսորի

[30] Ա. Մյասնիկյան, «Խորհրդային Հայաստանի ուղին», 1923, էջ 45—47։
[31] ՀՍՍՌ Պետ. արխիվ. ֆ. 40/113 ց. 3, գ. 191, թ. 33։

30 դասախոսի և 7 լեզուների դասատուների հաստիք[32]։ Համապատասխան կադրերի պակասի պատճառով, 57 միավորի դիմաց Լուսժողկոմատը կարողացավ հաստատել միայն 23 հոգու։

Հասարակագիտական ֆակուլտետի դասախոսներ հաստատվեցին պատմաբան Հակոբ Մանանդյանը, գրականագետ-լեզվաբան Մանուկ Աբեղյանը, գրականագետ Արսեն Տերտերյանը, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը, ճարտարապետ-պատմաբան Թորոս Թորամանյանը, մանկավարժ-հոգեբան Գուրգեն Էդիլյանը, իրավաբան Գրիգոր Ջուբարյանը, տնտեսագետ Գրիգոր Մելիք-Ալավերդյանը (ԳԱ տնտեսագիտական ինստիտուտի նախկին աշխատակից, այժմ թոշակառու), բնագիտական ֆակուլտետի դասախոսներ նշանակվեցին Ալեքսանդր Հակոբյանը (այժմ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս), կենսաբան Ավետիք Տեր-Պողոսյանը, քիմիկոս Ստեփան Ղամբարյանը և ուրիշներ։

Նոր ֆակուլտետների բացման առնչությամբ ավելի սուր է զգացվում դասախոսական կադրերի պակասը։ Համալսարանի ղեկավարությունը և Լուսժողկոմատը դրադվում են Մոսկվայից, Բաքվից, Թբիլիսիից, ինչպես նաև արտասահմանից նոր դասախոսներ հրավիրելու գործով։ Ճիշտ է, մինչև սովետական կարգերի հաստատումն էլ կային բավականաչափ բարձր որակավորում ունեցող հայ մասնագետներ, որոնք սակայն հնարավորություն չէին ունեցել աշխատելու իրենց հայրենիքում։ 1921—1930 թվականների ընթացքում համալսարան են հրավիրվում այն հիմնական ուժերը, որոնք իրենց ուսերի վրա տարան համալսարանական կրթությունը կազմակերպելու ամբողջ ծանրությունը։ Սրանց պատրաստած կադրերը հետագայում աշխատանքի անցան համալսարանում։

1921 թվականի ընթացքում համալսարանում աշխատանքի անցան ագրոքիմիկոս-միկրոբիոլոգ Պապա Քալանթարյանը (նա գիտական խորհրդի կողմից 1921 թ. հունվարին ընտրվում է պրոռեկտոր), ֆիզիկոս Հարություն Չերոտարյանը (Անժուր), պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը (այն ժամանակ լուսժողկոմն էր), տնտեսագետ Հայկ Ազատյանը (այն ժամանակ ՀԱՄԽ-ի նախագահն էր), ֆիզիոլոգ Տիգրան Մուշեղյանը[33], բանասեր-տնտեսագետ Թադևոս Ավդալբեգյանը, մանկավարժ Արշավիր Շավարշյանը (այժմ Հայկական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր), ֆիզիկոս Հովհաննես Նավակատիկյանը, մաթեմատիկոս Արշակ Տոնյանը, արևելագետ Գևորգ Ասատուրը, հնագետ Աշխարհբեկ Քալանթարը և ուրիշներ։

1922 թվականին աշխատանքի է հրավիրվում այգեգործության մասնագետ Գևորգ Գրձելյանը (այժմ ՀՍՍՌ գյուղատնտեսության մինիստրության գիտության պրոպագանդայի վարչության աշխատակից)։ Բժշկական ֆակուլտետի բացման կապակցությամբ համալսարանում աշխատանքի անցան բժ. Վահան Արծրունին, բժ. Արշակ Հակոբյանը[34] (այժմ Բժշկական ինստիտուտի ամբիոնի

[32] Տես «Դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1-ին, 1921, Էջմիածին. էջ 34։

[33] Տիգրան Մուշեղյանը (1886—1933) այն ժամանակ հիմնականում աշխատում էր ՀՍՍՌ Լուսժողկոմատում, սոցդասդաստիարակության բաժնում և միաժամանակ դասախոսում էր համալսարանում։ Նա հանդիսացել է կենդանիների ֆիզիոլոգիայի առաջին դասախոսը և լաբորատորիայի հիմնադիրը։ Տ. Մուշեղյանը 1933—1935 թթ. աշխատել է որպես համալսարանի ռեկտոր։

[34] Պրոֆ. Ա. Հ. Հակոբյանը հանդիսանում է համալսարանում մարդու ֆիզիոլոգիայի լաբորատորիայի հիմնադիրը (1922 թ.)։

վարիչ, պրոֆեսոր), բժ. Գրիգոր Արեշյանը, որը մինչև 1930 թվականը եղել է դասախոս և միաժամանակ համալսարանի տնտեսական գծով պրոռեկտորը։

1922 թվականի փետրվարից մինչև համալսարանի վերակառուցումը՝ 1930 թվականը, որպես ռեկտոր ղեկավարել աշխատանք է կատարել բիմիկոս-բակտերիոլոգ Հակոբ Հովհաննիսյանը (1875—1942)։

Համալսարանի վարչությունը[35] (ռեկտորատը) 1922 թվականին սեպտեմբերի 1-ի իր նիստում որոշում է, համալսարանում աշխատանքի հրավիրել անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանին (որն այն ժամանակ աշխատում էր Թավ-

---

[35] Վարչությունը լուծում էր ընթացիկ հարցեր։ Համալսարանի բարձրագույն օրգանը Խորհուրդն էր, որի կազմի մեջ մտնում էին դեկանները, 3 դասախոս, 3 ուսանող, 5 ներկայացուցիչ՝ պարտ. պրոֆ. կազմակերպություններից, Լուսժողկոմատից և այլ շահագրգռված հիմնարկներից։ Լուսժողկոմատի ներկայացուցիչը Խորհրդի որոշումների նկատմամբ ուներ վետոյի իրավունք։ Լուսժողկոմատի առաջին ներկայացուցիչը համալսարանի խորհրդում եղել է բանասեր կարո Մելիք-Օհանջանյանը։

բիզում), հայոց լեզվի ընդհանուր տեսություն, ֆրանսերեն ու պարսկերեն լեզուների դասընթացներ կարդալու համար, ակադեմիկոս Ալ. Թամանյանին «Արևելքի գեղարվեստ» և Արշ. Մելիքյանին՝ ընդհ. պատմություն կարդալու համար[36]։ Համալսարանի տեխնոլոգիական ֆակուլտետի շինարարական բաժինը ուժեղացնելու գործում առանձնապես մեծ դեր է խաղացել ակադեմիկոս Ալ. Թամանյանը։

Հայաստանից դուրս գտնվող հայ մասնագետներից շատ-շատերը, իմանալով հայկական համալսարանի բացման մասին, ձգտում էին վերադառնալ Հայաստան, աշխատել Երևանի ժողովրդական համալսարանում և իրենց ուժերը նվիրաբերել երիտասարդության կրթության ու դաստիարակության գործին։

Բժիշկ-վիրահատ Համբարձում Քեչեկը, որն այդ ժամանակ ապրում էր Թբիլիսիում, իմանալով բժշկական ֆակուլտետի բացման մասին, գրականագետ Հ. Սուրխաթյանի միջոցով հայտնում է Հայաստանում աշխատելու իր մեծ ցանկությունը և բժշկական ֆակուլտետի դեկան Սպ. Կամսարականի հրավերով, 1923 թվականից աշխատանքի է անցնում համալսարանում, սկզբում որպես դասախոս, ապա որպես բժշկական ֆակուլտետի դեկան և վիրաբուժության ամբիոնի վարիչ[37]։

Հրավիրվում են նաև քիմիկոս Լևոն Ռոտինյանը, մաթեմատիկոս Զերեթ Խոջանեթյանը և ուրիշներ։

1922/23 ուսումնական տարում համալսարանի դասախոսների թիվը հասավ 42-ի։

1923 թվականին համալսարանը աշխատանքի է հրավիրում մարքսիստական փիլիսոփայության լավագույն գիտակ Հայկ Գյուլի-Քևխյանին[38], բժ. Գրիգոր Մեղնիկյանին, բուսաբան Հովակիմ Բեղելյանին, աշխարհագետ Հայրապետ Հովհաննիսյանին, անասնապահության մասնագետ Խորեն Երիցյանին, Միքայել Վարունցյանին (գծագրական երկրաչափություն), Պողոս Սոտնիկյանին (լատիներեն)։ 1924 թվականից համալսարանում աշխատանքի անցան բազմավաստակ պատմաբան Լևոն (Առաքել Բաբախանյանը), պատմաբան Ստեփան Ներսիսյանը, գյուղատնտես-դաշտագետ Միքայել Թումանյանը, աշխարհագետ-մանկավարժ Ստեփան Լիսիցյանը, բժ. Լևոն Հովհաննիսյանը, բժ. Հայկանդուխտ Զախմախչյանը, գրականագետ Սիմոն Հակոբյանը։ 1925 թվականից համալսարանում սկսում են աշխատել պատմաբան Վահան Ռշտունին (այժմ համալսարանի ամբիոնի վարիչ, դոկտոր-պրոֆեսոր), բժ. Արտաշես Մելիք-Ադամյանը, իսկ 1926 թվականից՝ երկրաբան Տիգրան Ջրբաշյանը, մեխանիկայի մասնագետ Աշոտ Տեր-Մկրտչյանը, մանկավարժ Մուշեղ Սանթրոսյանը (այժմ համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ), մանկաբույժ Հովնան Գարրիելյանը, Դուրգեն Քոչարյանը (վիճակագրություն), բժ. Ելենա Քալանթարյանը, իսկ 1927—1928 թթ. հրավիրվում են՝ Միքայել Ենգիբարյանը, Լևոն Արիսյանը, Արտո Եղիազարյանը, բժ. Բ. Ֆանարջյանը, Ժիրայր Միրզախանյանը, Նիկ. Տրոիցկին և ուրիշները։

---

[36] Պետական համալսարանի արխիվ, գ. № 250, էջ 5։

[37] Նույն տեղում, էջ 14։

[38] Հայկ Գյուլի-Քևխյանին ՀԿ(բ)Կ Կենտկոմը ուղարկում է համալսարան, որպես ուսուցչական գծով պրոռեկտոր։ Նա այդ պաստում աշխատել է մինչև 1927 թվականը, այնուհետև ուսուցչական գծով պրոռեկտոր է աշխատել Լևոն Արիսյանը, (1927/28 ուս. տ.) ապա Արտո Եղիազարյանը (19 8-ից 1930 թթ.։

1925 թվականին համալսարանը տվեց իր առաջին շրջանավարտները։ Այդ շրջանավարտներից լավագույնները աշխատանքի անցան համալսարանում որպես լաբորանտներ, ասիստենտներ և դասախոսներ։ Այսպես՝ շրջանավարտներից համալսարանում թողնվեցին Գ. Աղաջանյանը, Հովհ. Զալթիկյանը, Նշ. Մայաթյանը (1925), Գ. Մուշեղյանը (1926), Վ. Ազատյանը, Լ. Հարությունյանը, Գ. Պետրոսյանը (1927), Ե. Հասրաթյանը, Արգ. Հովհաննիսյանը, Հ. Գաբրիելյանը, Ար. Ղարիբյանը (1928) և շատ ուրիշներ։ Հետագայում դասախոսական կադրերի պատրաստման գործում մեծ դեր կատարեց 1928 թ. հիմնադրված համալսարանի ասպիրանտուրան։

Համալսարանի դասախոսական կազմի քանակական աճը 1921—1930 թթ. ներկայացնում է հետևյալ պատկերը[39]։

Ուսումնական տարի	Դասախոսների թիվը	Ուսումնական տարի	Դասախոսների թիվը
1920թ. դեկտեմբեր	23	1925/26	104
1921/22	32	1927/28	116
1924/25	85	1929/30	138

Ինչպես տեսնում ենք, դասախոսական կազմը այդ տարիներին աճել է բավականաչափ արագ։

Բացի հիմնական դասախոսներից համալսարանում փոքրիկ կուրսեր, կարևոր թեմաների մասին առանձին դասախոսություններ կարդալու համար մասնագետներ էին հրավիրվում նաև Մոսկվայից, Բաքվից, Թբիլիսիից։ Ի դեպ, 1924 թվականի ապրիլին համալսարանում դասախոսություն է կարդացել նաև Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Վիկտոր Համբարձումյանը, որն այն ժամանակ 15 տարեկան էր և, ինչպես նշում էր Թբիլիսիում հայերեն լեզվով հրատարակվող «Մարտակոչ» թերթը, «դեռ տակավին պատանի և արտաքուստ սովորական դպրոցական աշակերտ»։ «Մարտակոչ»-ը իր 1924 թ. ապրիլի 15-ի № 87-ում գրում է. «Փոքրիկ դիտնական աստղագետ Վիկտորը նոր է վերադարձել Երևանից, ուր կարդացել է մեծ հաջողությամբ հինգ հրապարակական դասախոսություն, որոնցից մեկը համալսարանում էյնշտեյնի թեորիայի մասին։ Փոքրիկ գիտնականն ունի և գիտական աշխատություններ ու գյուտեր. նրա աշխատությունները («Արեգակի վրա բծերի մասին» և «Փոփոխվող աստղերի մասին») ընդունված են և հավանություն գտած Մոսկվայի մասնագետ գիտնականների կողմից»։

Մինչև 1925 թվականը համալսարանում պրոֆեսորի կոչում ունեցող ոչ մի դասախոս չի եղել։ Համալսարանի վարչության 1925 թ. դեկտեմբերի 12-ի որոշման հիման վրա Լուսժողկոմատը տասը դասախոսների՝ Հակոբ Մանանդյանին, Հրաչյա Աճառյանին, Մանուկ Աբեղյանին, Ստեփան Ղամբարյանին, Վահան Արծրունուն, Լևոն Ռոտինյանին, Համբարձում Քեչեկին, Հովակիմ Բեգլյանին, Հակոբ Հովհաննիսյանին, Բոգդան Գալստյանին—պրոֆեսորի կոչում է շնորհում, «նկատի ունենալով նրանց գիտական աշխատանքը և ինքնուրույն ամբիոն վարելը»[40]։

[39] Պետական համալսարանի արխիվ, գործ № 3, 10, 12։

[40] Նույն տեղում, գործ 254, էջ 72։

1928—1930 թթ. համալսարանի դասախոսներից պրոֆեսորի կոչում է շնորհվում նաև Պ. Քալանթարյանին, Գ. Արեշյանին, Լ. Հովհաննիսյանին, Ա. Մելիք-Ադամյանին, Ա. Տերտերյանին, Ավ. Տեր-Պողոսյանին, Ալ. Հակոբյանին, Ս. Հակոբյանին, Աշ. Քալանթարին, Ա. Տոնյանին, Խ. Երիցյանին, Մ. Թումանյանին[41]։ 1930 թ. արդեն համալսարանում 20-ից ավելի պրոֆեսորներ էին աշխատում։ Համալսարանի գործունեության առաջին շրջանում աշխատող պրոֆեսորների ամենամեծ ծառայությունն այն էր, որ նրանք գիտական քրտնաջան աշխատանքով, գիտական կուրս, դասընթաց էին ստեղծում և ավանդում։

Համալսարանի նյութա-տնտեսական բազան սկզբնական շրջանում շատ նեղ էր։ Չկային լաբորատորիաներ, կաբինետներ, արհեստանոցներ, գործնական աշխատանքի համար անհրաժեշտ սարքավորում։ Չէին բավարարում լսարանները։ Բժշկական ֆակուլտետի հիմնադրումը ավելի մեծ դժվարություններ հարուցեց։ Անհրաժեշտ էին անատոմիկում, կլինիկաներ և այլն։

Կարճ ժամանակից հետո վիճակը փոխվում է։ Համալսարանի վարչությունը ոչ միայն հաջողությամբ զբաղվում է համալսարանի դասախոսական կազմը ուժեղացնելու, նոր մասնագետներ հրավիրելու հարցով, այլև Հայաստանի կառավարության և ժողտնտխորհի օգնությամբ, գործնական պարապմունքներ անցկացնելու համար, համալսարանին կից հիմնում է աշխատանոցներ ու լաբորատորիաներ։ 1922 թվականին կազմակերպվում է անալիտիկ քիմիայի, ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի, անատոմիայի, հանքարանական և այլ աշխատանոցներ, մեխանիկական արհեստանոց և այլն[42]։

1924 թվականի օգոստոսին ժամանելով Սովետական Հայաստան, Ա. Լունաչարսկին այցելում է նաև համալսարան։ Այդ մասին նա իր «Երեք օր Խորհրդային Հայաստանում» հոդվածում գրում է. «Անձամբ ծանոթանալով այդ համալսարանին, ես այժմ եկա այն համոզման, որ անպայման անհրաժեշտ է ամեն կերպ օգնություն ցույց տալ այդ փոքրիկ հանրապետությանը, որպեսզի բարձրագույն կրթության այդ ջուրը, որը պետք է քաղաքակրթության կենտրոնը դառնա հայ լեռվին տիրապետող բոլոր մարդկանց համար, ոչ թե մարի, այլ ավելի ու ավելի լավ վառվի»[43]։

Անընդհատ ընդլայնվում է համալսարանի նյութա-տեխնիկական բազան, ծավալվում է շինարարությունը։ Ուսումնական պրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ հնարավորությունները մեծանում են։

Սովետական կառավարությունը ջերմ հոգատարությամբ է շրջապատում համալսարանը, տարեցտարի ավելացվում է համալսարանին հատկացվող մի-

---

[41] Նույն տեղում, գործ 261, էջ 81 և 1920—1930 թթ. հրամանագիրք, էջ 135։

[42] Այդ լաբորատորիաներից ամեն մեկի բացումը խոշոր իրադարձություն էր։ 1922թ. նոյեմբերի 8-ին տեղի է ունենում համալսարանի գրադարանի, հնագիտական, բնապատմական թանգարանների, հիստոլոգիայի, ֆիզիոլոգիայի և քիմիական լաբորատորիաների հանդիսավոր բացումը, որին ներկա էին ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանը, Առժողկոմ Ս. Լազարյանը, ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի քարտուղար Դր. Տեր-Սիմոնյանը, Հողժողկոմ Ար. Երզնկյանը և ուրիշներ (տես «Խորհրդային Հայաստան», 1922, 14 նոյեմբերի, № 255)։

[43] «Խորհրդային Հայաստան», 1924, 19 սեպտեմբերի, № 215։

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԻ ԵՒ ԴԱՍԱԽՕՍՆԵՐԻ ՄԻ ԽՈՒՄԲ
(1928 ԹՎԱԿԱՆ)

(տպագրվում է առաջին անգամ)

1-ին շարք (ձախից-աջ). — Ստ. Թոփչյան (Լուսաշխի նախագահ), պրոֆ. Մ. Արեգյան, Ա. Մոսվյան (Լուսժողկոմ), պրոֆ. Հակոբ Հովհաննիսյան (ռեկտոր). 2-րդ շարք. — Պրոֆ. Վ. Արծրունի, Հովհ. Նավակատիկյան (ֆիզիկոս), Արշ. Տոնյան (մաթեմատիկոս), Հակոբ Զորյան (պատմաբան), բժ. Փ. Հակոբյան, 3-րդ շարք. — Ա. Տեր-Մկրտչյան, պրոֆ. Հ. Գյուլի-Քեխյան, բժ. Ստ. Բազդասարյան, Սիմ. Հակոբյան (գրականագետ). 4-րդ շարք. — պրոֆ. Անդր. Արզումանյան, Մ. Սանթրոսյան (մանկավարժ), Մ. Դավթյան (ֆին. բանկային իրավունք), Ս. Աբովյան (գյուղատնտես), 5-րդ շարք. — Պ. Տեր-Պողոսյան (Լուսժողկոմատի աշխատակից), Կ. Մելիք-Օհանջանյան (բանասեր), Հովհ. Ակունյան (բժիշկ). Հր. Դալիկյան (իրավաբան), 6-րդ շարք. — Երվ. Խոջամիրյան (Արդարադատության պետ), Ա. Մեսրոբյան (ապրանքագետ), Երվ. Լալայան (ապգագրագետ), պրոֆ. Համբ. Քեչեկ, Ստ. Ներսիսյան (պատմաբան), 7-րդ շարք. — Ալեք. Քալանթար (հնագետ), Գր. Զուբարյան (իրավաբան), Գր. Գրձելյան (այգեգործ), պրոֆ. Հակոբ Մանանդյան, պրոֆ. Գր. Արեշյան (պրոռեկտոր), պրոֆ. Ստ. Ղամբարյան (քիմիկոս)

ջոցները։ Համալսարանի բյուջեի աճը 1921—1930 թթ. հետևյալ պատկերն է ներկայացնում[44]։

Ուսումնական տարի	Բյուջեով հատկացված գումարը (հազ. ռ.-ով)	Ուսումնական տարի	Բյուջեով հատկացված գումարը (հազ. ռ.-ով)
1920/21—22	Հաստատված բյուջե չի ունեցել։ Մոտ 7500 ռ.	1925/26	288,216
1922/23	49,216	1926/27	419,552
1924/25	174,802	1929/30	1,202,538

Համալսարանի հիմնադրման առաջին տարիներին ուսումնական աշխատանքը համարյա բացառապես տարվում էր դասախոսությունների միջոցով, որովհետև գործնական աշխատանքի հնարավորություններ չկային։ Հետագայում լաբորատորիաների և կաբինետների ստեղծումը հնարավորություն տվեց դասախոսություններին զուգընթաց կազմակերպելու նաև գործնական աշխատանքներ, սեմինար պարապմունքներ, ինչպես նաև էքսկուրսիաներ և այլն։ Նոր մասնագետների հրավիրումը, եղած մասնագետներին համալսարանի հետ կապելը, նյութական բազայի ընդլայնումը հնարավորություն է տալիս լրջորեն բարելավել նաև համալսարանական կրթության բովանդակությունը։ Եթե 1921/22 ուսումնական տարում համալսարանում ավանդում էին 27 առարկա, իսկ 1925/26 ուս. տարում արդեն բոլոր ֆակուլտետներում միասին վերցրած ավանդում էին 216 առարկա, 32,175 ժամով, որոնցից 9570 ժամը գործնական աշխատանքներ, ապա 1929/30 ուս. տարում արդեն համալսարանի բոլոր ֆակուլտետներում ու բաժիններում ավանդվում էին 787 առարկա[45], մոտ 98,000 ժամով որից 35,800-ը գործնական ու լաբորատոր աշխատանքներ էին[46]։

* * *

Համալսարանի հիմնադրման օրվանից նրա դասախոսների գործունեության մեջ լուրջ տեղ է գրավել գիտա-հետազոտական աշխատանքը։ Մինչև Գիտությունների ակադեմիայի հիմնումը Հայաստանում գիտական մտքի հիմնական կենտրոնը եղել է համալսարանը։ Այստեղ նշանակալից աշխատանք է կատարվել հայագիտության բնագավառում՝ հանձինս Հակոբ Մանանդյանի, Լեոյի, Մանուկ Արեղյանի, Հրաչյա Աճառյանի, Գրիգոր Ղափանցյանի, Արսեն Տերտերյանի և ուրիշների։

Համալսարանի գործունեության առաջին տարիների ընթացքում դասախոսական կազմի լուրջ մտահոգության առարկաներից մեկը եղել է դասագրքերի-ձեռնարկների կազմումն ու հրատարակումը, հայերեն լեզվով գիտական տերմինոլոգիայի ստեղծումն ու բառարանների կազմումը։

[44] Տվյալները բերվում են ըստ «Նոր կադրեր» երկշաբաթաթերթի (խմբագիր՝ Արսեն Մարգսյան, 1929 թ.) և համալսարանի «Գիտական տեղեկագրի» № 2—3-ի։

[45] Հետագայում լուրջ միջոցառումներ են ձեռնարկվում բաղմաոարկայնությունը վերացնելու համար։

[46] 1921/22 և 1925/26 ուս. տարիների տվյալները բերված են ըստ Հ. Հովհաննիսյանի համալսարանի «Գիտ. տեղեկագրի» № 2—3-ում տպագրված հոդվածի, իսկ 1929 30 ուս. տարվանը՝ «Պետական համալսարանի տեղեկատու»-ի։

Ֆիզիկայի ու մաթեմատիկայի բնագավառում կարևոր աշխատանքներ են կատարել Ալեքսանդր Հակոբյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Արշակ Տոնյանը, Հարություն Անժուրը և ուրիշները։ Սրանք մեծ ջանք են գործադրել գիտական տերմինոլոգիա մշակելու, դասագրքեր թարգմանելու, ինքնուրույն ձեռնարկներ ստեղծելու ուղղությամբ։ Հենց առաջին ուսումնական տարվա ընթացքում (մինչև 1922 թվ. վերջը) համալսարանը հրատարակում է 84 մամուլ դասախոսություններ-ձեռնարկներ՝ Հ. Նավակատիկյանի «Հանրահաշիվ», «Վերլուծական երկրաչափություն» ձեռնարկները, Հ. Մանանդյանի «Հայաստանի պատմությունը Բուրբ-թաթարական արշավանքների շրջանում», Ա. Տերտերյանի «Հայ նոր դրականությունը», Գ. Էդիլյանի «Աշխատանքի դպրոց», Վ. Արծրունու «Մարդակազմությունը», Ա. Տոնյանի թարգմանած «Եռանկյունաչափություն» ձեռնարկները[47] և այլն։

Համալսարանը մինչև 1930 թ. հրատարակել է Հ. Աճառյանի «Արմատական բառարան» մեծարժեք աշխատության 4 հատորները, Լեոյի «Հայոց պատմություն» (նորագույն շրջանը), Մ. Արեղյանի «Ուղղագրության ռեֆորմը», «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և պատմության», Հ. Մանանդյանի «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում» և բազմաթիվ այլ աշխատություններ։

Բնագիտական ֆակուլտետների դասախոսներից այդ շրջանում լուրջ գիտական հետազոտություններ են կատարել Պապա Քալանթարյանը (ագրոքիմիայի և միկրոբիոլոգիայի բնագավառում), Ավետիք Տեր-Պողոսյանը (կենսաբանական մտքի զարգացման պատմության և քաղցրահամ ջրերի ֆաունայի ուսումնասիրության բնագավառում), Հովակիմ Բեղելյանը (բույսերի ֆիզիոլոգիայի գծով), Խորեն Երիցյանը, Միքայել Թումանյանը և ուրիշները։ Քիմիայի բնագավառում մեծ վաստակ ունեն պրոֆեսորներ Ստեփան Ղամբարյանը, Լևոն Ռոտինյանը, Հակոբ Հովհաննիսյանը և ուրիշները։

Առաջին տարիներին արդեն անհրաժեշտություն է զգացվում հրատարակել մի գիտական հանդես։ ՀՍԽՀ Պետական համալսարանի «Գիտական տեղեկագրի» առաջին համարը լույս է տեսել 1925 թվականին։ Մինչև 1930 թ. լույս է տեսել «Գիտական տեղեկագրի» 6 համար, որտեղ համալսարանի դասախոսները տպագրել են բազմաթիվ գիտական աշխատություններ ու հոդվածներ։

Համալսարանում կատարվող գիտա-հետազոտական աշխատանքը ոչ միայն նպաստել է գիտության, կուլտուրայի հետագա զարգացմանը, կամ օգնել ժողովրդական տնտեսության առաջընթացին, այլև լրջորեն նպաստել է պրոֆեսորա-դասախոսական կադրերի գիտական որակավորման բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների հարստացմանը, հետևապես և՛ ուսման որակի, և՛ կադրերի պատրաստման բարելավմանը։

Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության գրադարանային սպասարկումը իրականացրել է համալսարանի գիտական գրադարանը։ Գիտական գրադարանը կազմակերպվել է համալսարանի հիմնադրման հետ միաժամանակ։ Համալսարանը գրքային ժառանգություն չի ստացել։ Անդամ ուսուցչական սեմինարիայի գրադարանից ոչինչ չէր մնացել։ Համալսարանի գրադարանը սկզբնական շրջանում որպես նվեր ստանում է Լազարյան ճեմարանի, Գևորգյան ճեմարանի, Վ. Տերյանի, Ա. Ծատուրյանի

[47] «Խորհրդային Հայաստան», 1922, 2 սեպտեմբերի, № 198 և 1923, 1 հունվարի, № 1։

և բաղմաթիվ այլ անձանց դրրային ֆոնդեր ու գրականություն[48], իսկ 1922/23 ուս. տարվանից գրականություն ձևոք է բերվում պետական բյուջեով։ Գրադարանի կազմակերպման ու կարգավորման ուղղությամբ այս շրջանում մեծ ջանքեր է թափել գրադարանապետ Գաբրիել Ռոտինյանը։

Ուսումնական-բաղաքական, դաստիարակչական ամբողջ աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման գործը հենց սկզբից իրականացնում է համալսարանի պարտիական կազմակերպությունը՝ կուսակցական բջիջը։ Համալսարանի պարտիական կազմակերպությունը (կուսբջիջը) հիմնադրվել է 1921 թվականի փետրվարի 14-ին, կոմունիստ ուսանողների անդրանիկ ժողովում[49] (այն ժամանակ դեռևս համալսարանում կոմունիստ դասախոսներ չկային)։ Այդ ժողովում կոմունիստ ուսանողները մանրամասն քննարկում են կուսբջիջի ու ամեն մի կոմունիստի անելիքը և հին բոլշևիկ Գառնիկ Ղազարյանին ընտրում են կուսբջիջի քարտուղար[50]։

Հետագայում ստեղծվում է նաև դասախոսների կուսբջիջ։ Դրանք 1924 թվականի մայիսի 17-ի որոշմամբ միավորվում են մեկ բջիջի մեջ[51]։ Համալսարանի գործունեության ծավալման հետ միասին աճում են նաև նրա պարտիական ու կոմերիտական կազմակերպությունները։ Եթե 1923/24 ուսումնական տարում համալսարանի պարտիական կազմակերպությունը ուներ պարտիայի 40 անդամ-թեկնածու, իսկ նոր միայն ստեղծված կոմերիտական կազմակերպությունը 42 հոգի, ապա 1929/30 ուս. տարում միայն ուսանողության մեջ պարտիայի անդամ թեկնածուների թիվը հասնում է 126-ի, իսկ կոմերիտականներինը 352-ի[52]։ Համալսարանի պարտիական կազմակերպությունը հսկայական դեր է կատարել համալսարանի ամրապնդման, նրա գործունեության ծավալման, ուսումնա-դիտական աշխատանքների բարելավման և պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության դաստիարակության գործում։

Մեր ուսումնասիրությունը հասցրել ենք մինչև 1930 թվականը, նկատի ունենալով, որ 1930 թվականին համալսարանը վերակառուցվեց և նրա ֆակուլտետների բազայի վրա ստեղծվեցին՝ Բժշկական, Գյուղատնտեսական, Պոլիտեխնիկական և Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտները, իսկ բուն համալսարանը վերածվեց Մանկավարժական ինստիտուտի։

Կառավարության որոշմամբ 1933 թվականին վերստեղծվեց համալսարանը, Մանկավարժական և Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտների բազայի վրա։

* * *

Անցել են տարիներ։ Համալսարանը աճել ու դարձել է ուսումնա-գիտական խոշոր հաստատություն 12 ֆակուլտետներով, որտեղ սովորում են 4500-ից ավելի ուսանողներ, 57 ամբիոններով, որտեղ աշխատում են 400-ից ավելի

---

[48] „Жизнь национальностей", 1922, № 12, 15 июля, стр. 11.

[49] Համալսարանի պարտիական կազմակերպության առաջին ժողովի արձանագրություն չի պահպանվել։ Այդ ժողովի մասին հաղորդում է տպագրվել ՀԿՊ կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթի 1921 թ. փետրվարի 17-ի համարում։

[50] Գառնիկ Ղազարյանը ՍՄԿՊ անդամ 1913 թվականից։ Այժմ ՀՍՍՌ գրողների միության անդամ է։

[51] Տես ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 116, գ. 2, թ. 2։

[52] Պետական համալսարանի արխիվ, գործ № 33, թ. 9։

պրոֆեսորներ ու դասախոսներ, որոնցից 18-ը ակադեմիկոսներ ու ակադեմիայի թղթակից անդամներ են, 50-ը՝ գիտության դոկտորներ ու պրոֆեսորներ, 213-ը՝ գիտության թեկնածուներ ու դոցենտներ են, որոնցից 253-ը՝ Երևանի համալսարանի սաներ են։

Այժմ համալսարանն ունի իր դիտա-հետազոտական սեկտորը 113,5 հասարիքային միավորներով, որն իր մեջ ընդգրկում է պոլիմերների ֆիզիկա-քիմիայի պրոբլեմային լաբորատորիան, էլեկտրոնային հաշվիչ և ղեկավարող մեքենաների, միջուկային ֆիզիկայի, կիսահաղորդիչների ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիաները, երկրի արհեստական ուղեկիցների դիտման կայանը և այլն։

Իր գոյության ընթացքում համալսարանը պատրաստել է 939-ի մասնագետներ, որից 920 ֆիզիկոսներ ու մաթեմատիկոսներ, 717 քիմիկոսներ, 761 աստղաբաններ, 2235 բանասերներ, 813 իրավաբաններ, 1404 տնտեսագետներ, 780 կենսաբաններ, 480 աշխարհագետներ, 688 երկրաբաններ, 133 միջազգայնագետ-պատմաբաններ, 137 բժիշկներ, 279 գյուղատնտեսներ, 47 ինժեներ-ճարտարապետներ։ Համալսարանի շրջանավարտներն աշխատում են ոչ միայն Հայաստանում, այլև միութենական այլ ռեսպուբլիկաներում։

Այս թվերը ցույց են տալիս, թե համալսարանի շրջանավարտները ինչ կշիռ ու տեղ ունեն մեր ժողովրդական տնտեսության մեջ, գիտության, կուլտուրայի, ժողովրդական կրթության, պետական ու պարտիական աշխատանքի ամենաբազմապիսի բնագավառներում։ Համալսարանը ոչ միայն հանդիսացավ այն արմատը, որից ճյուղավորվեցին մյուս ինստիտուտները, այլև հիմք ստեղծեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադրման համար և այժմ էլ ամեն տարի Գիտությունների ակադեմիայի ինստիտուտները համալրում է նորանոր գիտական աշխատակիցներով։ 1938 թվականից սկսած Երևանի համալսարանում սկսել են պաշտպանել դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ։ Անցած տարիների ընթացքում համալսարանում դոկտորական դիսերտացիաներ են պաշտպանել 24 գիտական աշխատողներ, 406 հոգի պաշտպանել են թեկնածուական դիսերտացիաներ։ ՍՍՌՄ Գերագույն Սովետի ընդունած՝ «կյանքի հետ դպրոցի կապն ամրապնդելու և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքը նոր հեռանկարներ է բացում մեր ռեսպուբլիկայի ուսումնա-գիտական ամենախոշոր հաստատության՝ Երևանի Պետական համալսարանի առաջ։